

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի Նիստի

Մասնակցում էին նիստի անդամները, շահառու հաշմանդամներ ունեցող հասարակական կազմակերպությունները.

Օրակարգում՝

Մարզում ներառական կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքը

/Զեկ՝ Գ.Սայադյան/


Մարզի պրոթեզի, օրթեզի կարիք ունեցող հաշմանդամներին անհրաժեշտ պարագաները փեղում փրամադրելու աշխատանքների կազմակերպման վերաբերյալ

Ողջունելով ներկաներին, տիկին Մուրադյանն առաջարկեց լսել տիկին Սայադյանին՝ մարզում ներառական կրթության ուղղությամբ շարունակվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Տիկին Սայադյանն ասաց, որ ուսումնական տարվա ավարտին պլանավորված չորս դպրոցներում՝ Արմավիրի թիվ 5-6, Վաղարշապատի թիվ 7-9 իրականացվել է ներառական կրթություն: 1-4 ընդամենը սովորում են 77 աշակերտներ, իսկ 5-9-րդ դասարաններում՝ 54: Ընդամենը 131 աշակերտներ: Դասասենյակները ապահովված են դիտակտիկ նյութերով, համապատասխան մասնագետներով /դեֆեկտոլոգ, լոգոպետ, օլիգոֆրենիստ/: Պարապմունքներն իրականացվում են համապատասխան ծրագրերով:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ տիկին Մուրադյանը ներկաներին տեղեկացրեց, որ 3 տարին մեկ անգամ մարզում կազմակերպվում է միջոցառում, որի նպատակն է պրոթեզի, օրթեզի և անհրաժեշտ այլ պարագաների կարիք ունեցողներին ըստ տարածաշրջանների, տեղերում տրամադրվեն անհրաժեշտ միջոցները: Այդ կապակցությամբ աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը հանձնարարվեց համայնքների ղեկավարների, սոցիալական պետական ծառայությունների, ՄԾՏԳ-ների աջակցությամբ ճշգրտել ցուցակները, ամբողջական տեղեկատվություն պատրաստել, պրոթեզավորման կենտրոնի տնօրինության հետ համագործակցման արդյունքում տեղի, օրվա և ժամի մասին տեղեկացնել շահառուներին:

Ավարտելով նիստը տիկին Մուրադյանն ասաց, որ մոտենում է դեկտեմբերի 3-ը՝ հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը: Այդ առիթով անհրաժեշտ է համագործակցված աշխատանք միջազգային և մարզային հասարակական կազմակերպությունների հետ՝ գեղեցիկ միջոցառումներ կազմակերպելու համար:

Մարզպետի փեղակալ՝



Լ.Մուրադյան

Արձանագրող՝ Ծ.Գրիգորյան